**Արձանագրություն N 2**
**ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-26/2 ծածկագրով էլեկտրական մեքենաների լիցքավորման ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 26.01.2025թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Ղուկասյան
Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Խաչատրյան
Ս. Մատինյան
Ա. Խաչատրյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հակոբյան
Բացակայում էր հանձնաժողովի անդամ Կ. Բարսեղյանը

**1. Գնման ընթացակարգի հայտերի բացման օրվա և ժամի, ինչպես նաև՝ հայտ ներկայացրած մասնակցի մասին**

(Տ. Ղուկասյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել,

բ) Գնման ընթացակարգի հայտը բացվել է www.armeps.am համակարգի միջոցով 26.01.2026թ. ժամը 12:00-ին,

գ) Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

*ՀՀ դրամ*

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գնման գին | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ | 1 000 000 | 833 333.33 | 166 666.66 | 1 000 000 |

Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ-0:*

**2. Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ. հասցեն**

(Տ. Ղուկասյան)

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գործունեության հասցե | Կապի միջոց | Էլեկտրոնային փոստի հասցե |
|---|---|---|---|---|
| 1 | «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ | ք. Երևան, Ազատության 24/1 | 010 700 700 | corp_tender@telecomarmenia.am |

## 3. Գնման ընթացակարգի մասնակցի հայտի գնահատման մասին

---

(Տ. Ղուկասյան)

3.1 Գնման ընթացակարգի մասնակից՝ «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի կողմից տրամադրված հայտը ներկայացվել է հրավերի պահանջներին անհամապատասխան՝ գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով և թվերով նշված գումարների հանրագումարը չի համապատասխանում  ընդհանուր գնի սյունակում նշված գումարին:

3.2 Հայաստանի ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջների *(հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը, կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան)* գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել մասնակցի հայտը:

3.3 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովի գնահատման թերթիկները՝ «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի տրամադրված հայտը գնահատվել է անբավարար:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ-0:*

## 4. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ

---

(Տ. Ղուկասյան)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3.2 և 3.3  կետերով ընդունված որոշումը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ-0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------------------------- Տ. Ղուկասյան

Անդամներ՝ ---------------------------------------- Գ. Խաչատրյան

---------------------------------------- Ս. Մատինյան

---------------------------------------- Ա. Խաչատրյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------------------------------------- Գ. Հակոբյան